<< Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դասին

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Բաբայան Նոնա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ. 191 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 . Կրտսեր դպրոցական տարիք; Վեց տարեկան դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, ուսուցման կազմակերպումը:

ԳԼՈՒԽ 2. Կրտսեր դպրոցականի դպրոց ինտեգրման դժվարությունները և դրանց հաղթահարումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՄՈՒՅՉԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԵՎ ԻՐԵՐԸ ՆՐԱՆՑ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԴԻՏԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է:

Ա.ԲԱՀԱԹՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԹԵՄԱՅԻՆ

Անցումը տասներկուամյա կրթությանը բերեց նրան, որ այժմ դպրոց են հաճախում վեց տարեկան երեխաները: Հետևաբար պետք է հաշվի առնել վեց տարեկան դպրոցականի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Վեց տարեկանում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին, որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար: Սա նշանակում է, որ ուսումնական գործունեության հիմքը պետք է լինի երեխայի տարիքային առանձնահատկությունները, անձի զարգացման հիմնական օրինաչափությունները:

Ուսումնական գործունեություն ծավալելու արդյունավետությունը և հաջողությունները պայմանավորված են դպրոցական առաջին օրերի նպատակամետ կազմակերպմամբ:

Շատ անվանի մանկավարժներ և հոգեբաններ հոգեկան զարգացման գործում մեծ նշանակություն են տալիս երեխայի մանկությանը: Ամենապայծառ լույսը, որ ջերմացնում է մանկան հոգին, ծնողների սերն է ու գորովը: Մանկությունը սկսվում է ընտանիքում: Որքանով է երեխան պատրաստ դպրոց հաճախել, կախված է ծնողից, մեծ է նաև նախադպրոցական կրթական հաստատությունների դերը: Վեց տարեկան երեխան, ով ավարտում է մանկապարտեզի ավագ խումբն ու պատրաստվում հաճախել դպրոց, ունի որոշակի պատկերացումներ այս կամ այն հարցի շուրջ, ձևավորվել է բնավորությունը, ունի կարծիք, ինքնուրույնություն, ունակ է ձևավորել և զարգացնել ընդհանուր գծեր՝ նպատակասլացություն, կազմակերպվածություն , կանխամտածվածություն:

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցական տարիքը համարվում է անձի կայացման կարևորագույն փուլերից մեկը, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, կատարել պահանջներ:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կանդրադառնանք այն հարցին, թե ո՞ր երեխան է համարվում պատրաստ հաճախելու դպրոց:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- **Ուսումնասիրել և վերլուծել կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները**
- **Բացահայտել կրտսեր դպրոցականի ինտեգրման դժվարությունները**
- **Հայտնաբերել խնդիրները**
- **Առանձնացնել խնդիրները լուծելու գործոնները**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- **Վեց տարեկանների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները**
- **Դպրոց ինտեգրման դժվարությունները և դրանց հաղթահարումը**

ԳԼՈՒԽ 1.

Կրտսեր դպրոցական տարիք: Վեց տարեկան դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, ուսուցման կազմակերպումը:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը դպրոցական կյանքի ընթացքում պայմանավորված է վեց տարեկան դպրոցականների առանձնահատկությունների հաշվառմամբ: Ուուցումը պետք է կառուցել նրանց հոգեկան զարգացման օրինաչափությունների, տարիքային առանձնահատկությունների, տարիքային փոփոխությունների իմացության հիման վրա: Վեց տարեկան երեխաների մեջ նկատվում է բոլոր համակարգերի բուռն զարգացում, որը նշանակում է, որ այդ տարիքի երեխաները պատրաստ են իրենց տարիքին համապատասխան մտավոր և ֆիզիկական աշխատանքի: Այս տարիքը անցման այնպիսի շրջան է, երբ երեխան իր մեջ միաժամանակ կրում է ինչպես նախադպրոցականի, այնպես էլ դպրոցականի գծեր:

<< Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված է նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Միայն այդ դեպքում կարելի է արդյունավետ ղեկավարել նրանց զարգացումը>>: [1]

Վեց տարեկանը համարվում է ճգնաժամային տարիք: Դպրոց գալով երեխաները հանդիպում են որոշ դժվարությունների:

1. ***<u>Ֆիզիոլոգիական առանձնահատկություններ</u>***

ա) Վեց տարեկանում յուրաքանչյուր երեխա պատրաստ է յուրացնել բավականաչափ տեղեկատվություն, բայց դեռևս չի ավարտվել նրա գլխուղեղի ձևավորման գործընթացը, և շատ վտանգավոր է մտավոր ծանրաբեռնվածությունը:

[1.] Ջ. Գյուլամիրյան << Հայոց լեզվի մեթոդիկա>>, Զանգակ 2006, էջ 21

բ) Վեց տարեկան երեխայի մոտ զարգացման փուլում է գտնվում ոսկրամկանային համակարգը: Գրելու գործընթացը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ մատների, դաստակի թուլությունը, ողնաշարի փափկությունը: Ոչ ճիշտ կեցվածքից և երկարատև աշխատանքից կարող է խաթարվել երեխայի առողջությունը՝ տեսողություն, ողնաշարի ծռում, սրտի աշխատանք:

2. Հոգեբանական առանձնահատկություններ

Կրտսեր դպրոցականի տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում մի շրջանի, երբ անհրաժեշտ է լինում պատասխանատվություն կրել, տարբեր պահանջներ իրականացնել: Մի կողմից երեխան անհանգիստ է , իմպուլսիվ, ունի ոչ կայուն կենտրոնացում, ուշադրություն, իսկ մյուս կողմից քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել՝ առաջնորդվելով որոշակի նպատակներով, զգացմունքներով, արժեքներով: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է գտնվում կամածինությունը:

3. Իմացական ոլորտի զարգացում

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը: Սովորողին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Ուսուցիչն օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում և վերարտադրման հնարներ: Ուսումնական գործընթացը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է միայն արտաքին կողմը, պետք է զարգացնել դիտողականությունը, երևույթների ըմբռնումը, հասկանալը: Ուսումնական գործունեության ընթացքում զարգանում է ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Սոցիալական զարգացում

Սոցիալապես զարգացած երեխան բարյացակամ հարաբերություններ է ստեղծում շրջապատի մարդկանց, հասակակիցների հետ և ձգտում է խուսափել անցանկալի հարաբերություններից: Նման երեխան կարողանում է

կարգավորել իր վարքագիծը, յուրացրած կանոնների ու նորմերի համաձայն պատկերացնում է իր տեղը մարդկանց շրջապատում:

Երեխան նմանօրինակ վարքագիծ է դրսևորում առօրյայում, տանը, մանկապարտեզում, զբոսանքի , էքսկուրսիայի ժամանակ: Այս ամենը նախադրյալներ է ստեղծում հետագա դպրոցական ուսումնառության լիարժեք կազմակերպման համար:

Երեխան մինչ դպրոց գնալը պետք է որոշակի պատկերացում ունենա բնության, , աշխարհի, միջավայրի, իր երկրի ու քաղաքի , կենցաղի և կուլտուրայի վերաբերյալ, տիրապետի բարեկիրթ վարվելաձևին, անձնական հիգիենային , փողոցային երթևեկության կանոններին, գիտենա ծնողների մասնագիտությունը, կենդանի և անկենդան բնության հետ շփման կանոնները, դասակարգի տաս և ավելի առարկաներ, օգտագործի ընդհանրացնող բառեր (հագուստ, միրգ, կենդանի, սպասք) :

<u>Մտածողության զարգացում</u>

Վեց տարեկան հասակում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Վեց տարեկանն ունի ակնառու-պատկերային մտածողություն, նա դյուրին է ընկալում և յուրացնում այն, ինչն ինքը տեսել է, շոշափել, զգացել ու ապրել:

Կրտսեր դպրոցական տարիքում զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Երեխայի մեջ զարգանում է գնահատող և դատողական խոսք կառուցելու կարողությունը: Նրանք արդեն կարողանում են ճիշտ պատասխանել իրենց տրված հարցերին, ունեն բավարար բառապաշար ինքնուրույն խոսք կառուցելու համար: Շարունակական պետք է աշխատել բառապաշարի հարստացման ուղղությամբ, որ կարողանան կառուցել ոչ միայն պատմողական, այլև նկարագրական խոսք: Ուսուցիչը պարտավոր է օժանդակել այդ գործընթացին՝ ապահովելով խոսքային միջավայր, ստեղծելով արտահայտվելու և շփվելու հնարավորություններ: Երեխաների մեջ պետք է սեր և հետաքրքրություն ձևավորել ընթերցանության հանդեպ: Այս տարիքում ձևավորվում է նաև գրավոր խոսքը: Այս տարիքում դժվարանում են գրավոր շարադրել իրենց խոսքը, սակայն բանավոր օգտագործում են պարզ համադասական նախադասություններ, հորինում

որևէ պատմություն, իրենց խոսքով կարողանում են գրավել շրջապատող մարդկանց ուշադրությունը, տիրապետում են երկխոսություն վարելու հմտություններին:

Սա շարունակական գործընթաց է, և տարրական դպրոցն ավարտող յուրաքանչյուր երեխա պետք է կարողանա արտահայտել իր մտքերը, կարդացածը:

Երբ զարգացած է երեխայի ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, ուշադրությունը, ըմբռնումն ու երևակայությունը, նա կարողանում է համեմատել, համադրել, վերլուծել, եզրահանգումներ անել:

6 – 7 ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄ

Տարիքային հոգեբանության մեջ հայտնի են մի քանի ճգնաժամային փուլեր, որոնց մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում 6 – 7 տարեկանի ճգնաժամը: Երեխան մուտք է գործում իր կյանքի դժվար և բեկումնային փուլ: Նա մեծ չէ, բայց արդեն փոքր էլ չէ, դեռ ցանկանում է, բայց պետք է …

Այս տարիքի երեխային բնութագրելիս կարելի է ընդգծել մանկական անմիջականության կորուստը: Նա իրեն << մեծահասակ>> զգալու, հասուն լինելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու, կարծիք հայտնելու պահանջմունք է ունենում: Դպրոց հաճախելը երեխայի համար սոցիալական դիրքի ձեռքբերում է, ինչն էլ արդեն մեծանալու նշան է:

6 – 7 տարեկանի ճգնաժամը մեկ բառով եթե նկարագրենք, դա կամածինության ծնվելու շրջանն է: Գոյություն ունեն մի քանի վարքային բնութագրումներ, որոնք առաջ են գալիս ճգնաժամային շրջանում՝ դադար, վեճ, խորամանկություն, կամակորություն, ինքնուրույնություն: Ճգնաժամային տարիքի վերջում անցնում են այս հատկությունները, մնում է ինքնավստահությունը, ինքնասիրությունը, ինքնագնահատականը:

ԳԼՈՒԽ 2. Կրտսեր դպրոցականի դպրոց ինտեգրման դժվարությունները և դրանց հաղթահարումը

Վեցամյա երեխայի դպրոցի պատրաստվածությունը ժամանակատար, բարդ և նպատակային գործողություն է, որը պետք է մշտապես լինի ծնողների ուշադրության կենտրոնում: Այս թեմային անդրադարձել է հոգեբան – մանկավարժ Հռիփսիմե Ղաջոյանն իր << Երեխաները տարիքն ի վեր>> օժանդակ ձեռնարկում, որտեղ գրել է. << Գոյություն ունի մարդկային գործունեության երեք տեսակ՝ <u>խաղ, ուսում, աշխատանք:</u> Վաղ տարիքում խաղը գործունեության միակ տեսակն է: Ավագ նախադպրոցական տարիքում մանկական կյանքի մեջ մուտք են գործում ուսման տարրեր: Դպրոցական տարիներին արդեն երեխան բաժանում է իր ժամանակը խաղի և ուսման միջև, ինչ – որ ժամանակ էլ հատկացնում է աշխատանքային հմտություններ ձեռք բերելուն>>: [1]

Ուսումնական գործունեությունը երեխայի կյանքի մի կարևոր և բարդ բնագավառ է: Դպրոցական առաջին օրվանից երեխան հայտնվում է նոր պայմաններում՝ հանդիպելով մինչ այդ իրեն անծանոթ որոշակի դժվարությունների: Այդ դժվարությունները հաղթահարելու համար դպրոց ընդունվող երեխան պետք է ունենա.

1. կրթության օրենքով նախատեսված անձնագրային տարիք
2. ֆիզիկական զարգացման՝ բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան մակարդակ
3. բարձրագույն նյարդային համակարգի զարգացման բավարար աստիճան
4. հուզակամային ոլորտի՝ իր տարիքին համապատասխան դրական բնութագիր
5. ճանաչողական գործընթացների՝ տարիքին համապատասխան բնութագիր
6. պլանաչափ և երկարատև մտավոր աշխատանք կատարելու ունակություններ
7. կոնկրետ և վերացական մտածողության որոշակի մակարդակի առկայություն

[1.] Հռիփսիմե Ղաջայան << Երեխաները տարիքն ի վեր>>, Երևան, 2002, էջ 36

8. ուսումնական գործունեության նոր պայմաններին հարմարվելու ունակություն

9. իր տարեկիցների հետ հաղորդակցվելու ունակություն

10. ուսումնական խնդիրներ լուծելու ունակություն

11. որոշակի բառապաշարով պարզ և ընդարձակ նախադասություններով խոսք կառուցելու կարողություն

12. փոքրիկ բանաստեղծություններ, հանելուկներ, շուտասելուկներ արտասանելու, ունկնդրած հեքիաթները վերարտադրելու ունակություն

13. ուսուցչի տրված հանձնարարությունը հասկանալու և այն կատարելիս ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն

14. մատների նուրբ շարժումների ներդաշնակ և բավարար զարգացման մակարդակ

Ուսումնական գործունեությանը երեխայի պատրաստականության աստիճանի մասին անհրաժեշտ է ունենալ տեղեկությունների մի քանի խումբ.

1. երեխայի բնավորության առանձնահատկությունները
2. երեխայի հետաքրքրությունների շրջանակը
3. աշխատանքային կարողությունները
4. գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները
5. միջանձնային հարաբերությունները
6. ընկերային հարաբերությունները

Դպրոցական հարմարվողականությունը երեխաների ճանաչողական, հուզակամային ոլորտների վերադասավորվածությունն է դպրոցական մշտական և կազմակերպված ուսուցման պայմաններում: Երեխան, հայտնվելով նոր սոցիալական իրավիճակում, փորձում է ակտիվորեն հարմարվել դրան: Երեխայի ֆիզիկական ակտիվությունը կրճատվում է, շարժվելու պահանջմունքը մնում է նույնը: Երեխայի դպրոցին հարմարվելու հանգամանքը հատուկ ուշադրություն է պահանջում , և այստեղ մեծ դեր ունի ուսուցիչը, որպեսզի դպրոցական հարմարվողականությունը երեխայի համար հեշտ լինի հաղթահարելը:

Առանձնակի ուշադրության է արժանի բարենպաստ միջավայրի

ստեղծումը երեխայի համար: Մի երեխայի ձեռքբերումները երբեք չպետք է համեմատել մյուս երեխաների հետ, մշտապես պետք է խրախուսել երեխայի ամենափոքրիկ հաջողությունը, երեխայի ուշադրությունը պետք է տեղափոխել ներանձնային և միջանձնային հարաբերությունների վրա:

Դպրոցական հարմարվողականությունը ամենից առաջ դրսևորվում է նրանում, որ երեխան հաճույքով է դպրոց գնում:

Աշխատանք պետք է տանել նաև ծնողների հետ: Ծնողական ժողովներում պետք է կազմակերպել սեմինարներ, ծնողներին ներկայացնել արդի ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, դժվարությունները հաղթահարելու ուղիները:

Պետք է կազմակերպել անհատական հանդիպումներ ծնողների հետ, համագործակցել բազմամասնագիտական խմբի մասնագետների հետ: Դպրոց – ընտանիք առողջ համագործակցությունը օգնում է հաղթահարել ցանկացած տարիքային, հոգեբանական, կրթական խնդիրներ:

<< Դպրոցական կյանքի առաջին շրջանում , նոր միջավայրում առաջնային են դառնում ինքնահաստատման, երբեմն մյուսներից տարբերվելու, հեղինակություն ձեռք բերելու, ինքնատիպ լինելու ցանկությունը, խմբային գործունեության մեջ իր յուրովի դերակատարումն ունենալու միտումը>>: [1]

Դպրոցի կրթադաստիարակչական միջավայր ինտեգրման գործընթացում առկա են հետևյալ դժվարությունները.

ա) կյանքի ռիթմի փոփոխություն

բ) հուզական ապրումներ

գ) ինքնակառավարման ցածր մակարդակ

դ) ուսումնական ծանրաբեռնվածությունը

ե) համադասարանցիների և ուսուցիչների ներկայությամբ հրապարակավ ելույթ ունենալը, կաշկանդվածությունը

զ)նոր միջավայրում հոգեբանական անհարմարավետությունը

[1.] Азаров Ю. Студент. Возможности личного роста// Высшее образование в России 2002 N1 стр 50-57

Նշված դժվարությունները էական փոփոխություններ են առաջացնում երեխայի վարքի և գործունեության մեջ:

<<Ի. Ն. Սիմաևան առանձնացնում է կրթական գործընթացում սովորողների հարմարման հետևյալ փուլերը.

- ֆիզիոլոգիական(մոտ 2 շաբաթ)
- հոգեբանական (մոտ 2 ամիս)
- սոցիալ-հոգեբանական (մինչև 3 տարի)>> [1]

Դասվարների շրջանում իրականացված հարցումներից պարզ դարձավ, որ երեխաների 39,4% -ի մոտ առկա են հոգեբանական դժվարություններ, 25,2%-ի կարծիքով դժվարությունները ուսումնական են, քանի որ խաղից միանգամից անցում է կատարվում ուսումնական գործունեությանը, դասվարների 29,8%-ն էլ նշում են, որ առաջին դասարանցի երեխաները հանդիպում են ինտեգրման դժվարությունների, նոր կոլեկտիվում հարմարմանը, ժամային գրաֆիկին:

Այդ դժվարությունները հաղթահարելու համար երեխաները առաջին հերթին ակնկալում են դասվարի աջակցությունը, ինչպես նաև ծնողների, քանի որ նրանք այս տարիքում շատ են կախված ծնողներից, և իրենց պաշտպանը , իդեալը ծնողն է:

Զարգացման գործում ձեռք բերած հաջողությունները որակապես փոխում են փոքրիկի ողջ կյանքը: Թեև մեծահասակի դերը մնում է անփոխարինելի, սակայն երեխան ձգտում է գործել առանց մեծերի օգնության:

Նոր միտումները մեծացնում են երեխայի ակտիվությունը և նրա ու մեծահասակի միջև նոր փոխհարաբերություններ են առաջացնում: Մեծահասակների կյանքին հաղորդակից դառնալու ձգտումը հանգեցնում է այն բանին, որ երեխան այդ կյանքի մասին տեղեկությունները յուրացնում է իր համար մատչելի խաղի միջոցով:

[1] Симаева И.Н., Динамика эмоционально-чувственного состаяния личности в процесе адаптации к деятельности , Калининград, Изд-во КГУ 2002 129с

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, դպրոցական ուսուցմանը պատրաստ կարելի է համարել այն երեխաներին, ովքեր ոչ միայն անձնագրային տարիքով և ֆիզիկական տվյալներով համապատասխանում են որոշակի չափանիշների , այլև կարող են մտածել և ինքնուրույն գործել, համագործակցել տարեկիցների հետ և հասել են հուզական-զգացմունքային որակների զարգացման որոշակի աստիճանի, այսինքն նրանց մտածողությունը , կամքը և հույզերը ներդաշնակորեն համակցված են:

Յուրաքանչյուր 6-6,5 տարեկան երեխա իրավունք ունի սովորելու՝ անկախ նրա ուսումնական գործունեության համար պատրաստ լինելու աստիճանից: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ ընտրել երեխայի դպրոցը, տեսակը, հոգեբանամանկավարժական տեսանկյունով ճիշտ համալրվեն առաջին դասարանները, և ուսումնական գործունեության առաջին փուլում մեթոդապես հմտորեն կազմակերպվի կրթադաստիարակչական գործընթացը, ինչպես նաև բավարար չափով օգնություն տրամադրվի ծնողներին:

Ուսումնառության առաջին շրջանում դպրոցի կրթական միջավայր սովորողների ինտեգրումը սոցիալ-մշակութային նոր միջավայրում նոր հարաբերությունների ձևավորման գործընթաց է, որում առանձնանում են ուսումնական, հոգեբանական, սոցիալ-մշակութային և մասնագիտական ուսժղղությունները:

Դպրոց ինտեգրման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի անձնային և մասնագիտական որակներից, մանկավարժական տակտից, հաղորդակցման ճկուն, ըստ իրավիճակի ոճերի տիրապետման հմտություններից:

Նաև.

1. Վեցամյա երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է կարևորել ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը:
2. Ուսումնական բովանդակությամբ է որոշվում երեխայի մտավոր զարգացման ընդհանուր տիպը և կառուցվածքը:
3. Խաղը լավագույն միջոցն է պարզելու, թե երեխան որքանո՞վ է պատրաստ հաճախել դպրոց:

4. Համագործակցելով կոլեգաների, երեխաների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ , կարելի է կարճ ժամանակահատվածում պատրաստել բոլոր վեցամյա երեխաներին հաճախել դպրոց;
5. Երեխային նախապատրաստել ուսումնական գործունեությանը նշանակում է տարբեր ճանապարհներով և ամենաբազմազան միջոցներով օժանդակել, որ ավագ նախադպրոցականը ձեռք բերի մտածողական գործողություններ կատարելու որոշակի ունակություններ:
6. Դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններն են սովորողի հաղորդակցման մակարդակը , ուսուցչի աջակցությունը, սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Զանգակ 2006

2. Հռիփսիմե Ղաջյան, Երեխաները տարիքն ի վեր , Երևան 2002

3. Ս.Վ. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977
4. Նախաշավիղ 7 2012, 2 2016, 3 2016, 4 2016

5. Симаева И.Н., Динамика эмоционально-чувственного состаяния личности в процесе адаптации к деятельности , Калининград, Изд-во КГУ 2002

6. Азаров Ю. Студент. Возможности личного роста// Высшее образование в России 2002 N1

7. lib.armedu.am